



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՈՒՍԱԼԵՌԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ. փոստ <mailto:musalcr.armavir@mta.gov.am>
Հեռ. 0231 6 47 22

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«5» փետրվարի 2019 թվականի N 11-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2018
ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 83-րդ հոդվածի երկրորդ մասով՝ համայնքի ավագանին
որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի
2018 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող
շաբաթերից սկսած:

	ԿՈՂՄ (8)	ԴԵՄ (0)	ՁԵՌՆՊԱԿ (0)
ԱԼԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ		_____	_____
ՍԵՐԳՈ ՍԱՄՎԵԼՅԱՆ		_____	_____
ԱՐԱ ՌՈՍՏՈՍՅԱՆ		_____	_____
ԱՌԱՔԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ		_____	_____
ՎԱՀԱԳՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ		_____	_____
ՌՈԲԵՐՏ ԹԱՄԱԶՅԱՆ		_____	_____
ՆՈՐԱՅՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ		_____	_____
ՄԻՇԱ ԱՎԱԳՅԱՆ		_____	_____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի
2018 թվականի եկամուտների և ծախսերի կատարման

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի կողմից ներկայացված հաստատված բյուջեների համաձայն՝ 2018թ.-ի տարեսկզբի ազատ մնացորդը կազմում է 7116.4 հազար դրամ, որից 6601.4 հազար դրամ՝ վարչական բյուջե, 515.0 հազար դրամ՝ ֆոնդային բյուջե: Եկամուտներ են նախատեսվել 64144.0 հազար դրամ, որից վարչական բյուջեով 64144.0 հազար դրամ, իսկ ֆոնդային բյուջեով 0 դրամ:

Համաձայն ներկայացված հաշվետվությունների՝ վարչական բյուջեն եկամուտների մասով կատարվել է 94.5 % կամ պլանով նախատեսված 64144.0 հազար դրամի դիմաց կատարվել է 60609.0 հազար դրամ, այդ թվում սեփական եկամուտների գծով 25710.7 հազար դրամի դիմաց կատարվել է 22175.7 հազ.դրամ (86.3%), իսկ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիայի գծով 38433.3 հազար դրամ:

Սեփական եկամուտներ՝

Հողի հարկից եկամուտ է նախատեսվել 6811.8 հազար դրամ, փաստացի գանձվել է 5266.1 հազար դրամ (77.3%):

Գույքահարկի գծով նախատեսվել է 12058.4 հազար դրամ, փաստացի գանձվել է 12175.3 հազար դրամ (100.9%):

Ընդամենը տեղական տուրքեր է նախատեսվել 594.3 հազար դրամ, փաստացի գանձվել է 629.7 հազար դրամ (106.0%):

Ոչ հարկային եկամուտներ չի նախատեսվել, փաստացի գանձվել է 579,8 հազար դրամ:

Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճար է նախատեսվել 262.4 հազար դրամ, փաստացի գանձվել է 136.7 հազար դրամ (52.0%): Տեղական վճարներ են նախատեսվել 5400.0 հազար դրամ, փաստացի գանձվել է 3384.5 հազ.դրամ (62.7%):

Համայնքի սեփականություն համարվող հիմնական միջոցների օտարումից մուտքեր են նախատեսվել 194.0 հազար դրամ, փաստացի գանձվել է 640.5 հազ. դրամ (330.1%) :

Տարեսկզբի ազատ մնացորդը կազմում է 6330.6 հազ. դրամ:

Ծախսեր

Մուսալեռի համայնքապետարանի 2018թ. բյուջեով ծախս է նախատեսվել. Վարչական մասով՝ 64144.0 հազար դրամ, փաստացի ծախսվել է 55180.3 հազար դրամ, իսկ ֆոնդային մասով նախատեսվել է 7756.9 հազար դրամ փաստացի ծախսվել 6855.2 հազար դրամ:

Վարչական բյուջեով աշխատավարձի և հավելավճարներ հողվածներով ծախս է նախատեսվել 20500.0 հազար դրամ, փաստացի ծախսվել է 19757.6 հազար դրամ (96.3%):

Սոցիալական նպաստներ / սոց. օգնություն / է նախատեսվել 6160.0 հազար դրամ, փաստացի ծախսվել է 6155.5 հազար դրամ (100%):

Այլ մշակութային միջոցառումների համար նախատեսվել է 0 դրամ:

Համայնքի աղբահանման, կոմունալ ծառայության ծախսեր են նախատեսվել 2900.0 հազար դրամ, փաստացի ծախսվել է 2900.0 հազար դրամ (100%):

Ծառայությունների և ապրանքների ձեռք բերման և այլ ծախսերի համար ծախս է նախատեսվել 20126.0 հազար դրամ, փաստացի ծախսվել է 15825.0 հազար դրամ (78.6%):

Սուբսիդիաներ ոչ ֆինանսական համայնքային կազմակերպություններին ծախս է նախատեսվել 15150.0 հազար դրամ փաստացի ծախսվել է 13392.0 հազար դրամ (88.4%):

Պահուստային ֆոնդ է նախատեսվել 2150.0 հազ.դրամ:

Ֆոնդային բյուջեով նախատեսվել է 7116.3 հազար դրամ, փաստացի ծախսվել է 6214.5 հազար դրամ (87.3%):

Շենքերի և շինությունների կառուցում հողվածով նախատեսվել է 1800.0 հազար դրամ, փաստացի ծախսվել է 1800.0 հազար դրամ (100%):

Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում հողվածով նախատեսվել է 3760.0 հազար դրամ, փաստացի ծախսվել է 3760.0 հազար դրամ (100%):

Վարչական սարքավորումների ձեռքբերման ծախսեր են նախատեսվել 265.0 դրամ, փաստացի ծախսվել է 265.0 հազար դրամ (100%): Տրանսպորտային միջոցների ձեռք բերում և պահպանում՝ ծախսեր են նախատեսվել 1126.5 հազար դրամ, փաստացի ծախսվել է 885.0 հազար դրամ (78.6%) :

Նախագծահետազոտական ծախսեր է նախատեսվել 70.0 հազար դրամ փաստացի ծախսվել է 70.0 հազար դրամ (100%) :

Աշխատակազմի քարտուղար



Գ. Սայադյան